ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 նոյեմբերի 2012թ. թիվ 231-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՊԼԱՆԱՅԻՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. հոկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին» N 624 որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետի «ե» ենթակետը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.13 կետի «դ» ենթակետով և հաշվի առնելով Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության աշխատակիցների 25.10.2012թ. պլանային ստուգման թիվ 29 արձանագրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

Վանաձորի քաղաքապետին տալ պարտադիր կատարման ցուցումներ.

- Աճուրդային և մրցութային գործընթացը կազմակերպել համաձայն ՀՀ կառավարության 30.07.1998թ. թիվ 479; 29.12.2005թ. թիվ 2404 որոշումների պահանջների՝ համապատասխան հողհատկացման և հողերի գործառնական նշանակությունը շահագրգիռ կողմերի հետ համաձայնեցնելուց հետո,
- Վերացնել պլանային ստուգման ժամանակ արձանագրված աճուրդային և մրցութային գործընթացների թերությունները:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. նոյեմբերի 7
ք.Վանաձոր